

14096



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան



«19» 12 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 287 - 24

Նախաձեռնող՝

«ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ

Վայոց ձորի մարզ, Վայք բնակավայր, Երկրաբանների փ. 7,

Գործունեությունը՝

Սիսիան համայնքի Սառնակունք բնակավայրում
կրթահամալիրի կառուցում

Սյունիքի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 287 - 24

«19» շենյան 2024թ.

Սիսիան համայնքի Սառնակունք բնակավայրում նախատեսվող կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Սյունիքի մարզ, Սիսիան համայնք, Սառնակունք բնակավայր

Ներածական մաս. Համաձայն «ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ կողմից ներկայացված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն)՝ նախատեսվում է Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Սառնակունք բնակավայրում կառուցել կրթահամալիր:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը փորձաքննության է ենթարկվում քաղաքաշինության բնագավառում որպես քաղաքաշինական գործունեության օբյեկտի կառուցում:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Սիսիան համայնքապետարանի կողմից տրամադրված 2024թ. հունվարի 18-ի N 2 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականով գրանցված (կադաստրային ծածկագիր՝ 09-081-0018-0012) պետական սեփականություն հանդիսացող և «Սառնակունք միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին անհատույց օգտագործման տրված 2,48 հա հողամասի սահմաններում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման: Կրթահամալիրի մակերեսը կազմում է 13660.80 մ², տարածքում առկա հին դպրոցի շենքը չի քանդվելու: Նոր դպրոցի տարածքում ծառեր առկա չեն, ծառերը գտնվում են հին դպրոցի հարակից տարածքում, որոնք որևէ ազդեցության չեն ենթարկվելու:

Նախատեսվող գործունեությունն իրականացվում է քաղաքաշինության կոմիտեի և Հայաստանի զարգացման հիմնադրամի պատվերով իրականացվող «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների» ծրագրի շրջանակներում:



Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Սյունիքի մարզի, Սիսիանի համայնքի Սառնակունք բնակավայրում, որտեղ է կառուցվելու է միջնակարգ դպրոց 144+40 աշակերտի համար: Տիպային դպրոցի և մանկապարտեզի տեղակայման նախագիծը իրականացվել է ըստ պատվիրատույի /<< Քաղաքաշինության Կոմիտեի/ կոմից տրված տեխնիկական առաջադրանքի և համաձայն ՀՀՆ պահանջների:

Շրջանի և տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են ժամանակակից գետա-լճային առաջացումները, կավային գրունտներով և հրաբխային առաջացումներով, բազալտներով, հողաբուսական շերտի հզորությունը 0.3-0.4 մետր է:

Հորատման աշխատանքների ընթացքում գրունտային ջրերը հորատանցքերում մինչև 8.0 մ խորության վրա չեն բացահայտվել:

Ֆիզիկատերերաբանական վտանգավոր երևույթները, ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը, ճահճացումը և այլն, բացակայում են:

Կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- Կրթահամալիրի համար նախատեսված մակերես - 13660,80 մ²,
- կառուցապատման մակերես - 2529,80 մ²,
- կանաչապատման մակերես - 6240.35 մ²,
- ճանապարհներ և սավառակներ - 3022 մ²,
- ռետինե ծածկույթ - 1068,65 մ²,
- արհեստական խտածածկույթ - 800 մ²:

Համաձայն նախագծային լուծումների՝ կրթահամալիրի ծավալա-տարածական լուծումն իրենից ներկայացնում է երեք իրար կցված՝ երկհարկանի հիմնական դպրոցի, մարզադահլիճի և հանդիսությունի դահլիճի և երկհարկանի մանկապարտեզի մասնաշենքեր: Դպրոցի, մանկապարտեզի և մարզադահլիճի մուտքերի մոտ նախատեսված են թեքահարթակներ: Հանդիսությունների դահլիճը նախատեսված է 144 նստատեղով, իսկ մարզասրահի երկրորդ հարկի մակարդակում նախատեսված է 60 տեղանոց տրիբունա (մարզադահլիճի չափերն են՝ 24.7մ x 18.0 մ):

Առաջին հարկում նախագծված են դասասենյակներ, կաբինետներ և բուֆետ, իսկ երկրորդ հարկում՝ դասասենյակներ, ինֆորմատիկայի կաբինետ, մեթոդ կաբինետ, ռազմագիտության դասասենյակ, ռոբոտատեխնիկայի կաբինետ և ուսուցչանոցը: Դպրոցի մասնաշենքում նախագծվել է նկուղային հարկ 21.6 x 20.4 մ չափերով: Նկուղային հարկում տեղավորվել են գրադարանը, խոհանոցը, բուժկետը, պահոցները, տղաների և աղջիկների սանհանգույցները, էլեկտրովահանակ, ջրի ռեզերվուար, կաթսայատուն, կոյուղու պոմպարան:

Հարկերն իրար հետ կապված են աստիճանների միջոցով, տեղադրվելու է հարկերը կապող միջհարկային ամբարձիչ հաշմանդամների համար: Ըստ նախագծի կրթահամալիրի ամբողջ տարածքը բարեկարգվելու է, նախագծված է 4.0 x 8.0մ ջերմոց, 26x14մ բաց ցանկապատված մարզադաշտ, 100 մ երկարություն ունեցող վազքուղի, տնտեսական բաք, ավտոկայանատեղի, ինչպես նաև էլեկտրամարտկոցային ֆոտովոլտային արևային վահանակների համար ցանկապատով տարածք : Դպրոցի հողամասը ամբողջ պարագծով ցանկապատված է:

Դպրոցի բակային տարածքի բարեկարգման աշխատանքների շրջանակում նախատեսվում է բաց մարզադաշտ և մարզահրապարակ, կազմողի ճանապարհներ և



հարթակներ: Գոյություն ունեցող ցանկապատն իրականացված մետաղյա ցանցով, կփոխարինվի ուղղանկյուն մետաղական ձողերով ցանկապատով:

Կրթահամալիրի տարածքում տեղադրվելու է 10 մ³/օր արտադրողականությամբ կենցաղային կեղտաջրերի մաքրման կայան, որը բավարարելու է դպրոցի հզորությանը: Նախատեսվել է դրենաժային հորատանցք ավելցուկային ջրերի հեռացման համար:

Կրթահամալիրն ապահովված է լինելու հրդեհային ազդարարման ավտոմատ համակարգերով, էվակուացիոն ուղիներով և ելքերով և այլն:

Էներգախնայողության և էներգաարդյունավետության տեսանկյունից նախատեսվել են միջոցառումներ՝ արևային ահանակների տեղադրում, շենքի երեսպատման համակարգի, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհանների տեղադրման, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացման ուղղությամբ:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ (թեքահարթակներ, սանհանգույցներ և այլն):

Շինարարական մեքենաներից և մեխանիզմներից օգտագործվելու են աշտարակային կոունկ, բետոնատար մեքենա, եռակցման ագրեգատ, բուլդոզեր, շարժական կոմպրեսոր, տոփանիչ, էքսկավատոր, ավտոբետոնատար և այլն:

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ և այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ և կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր և այլն: Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա:

Շինարարական աշխատանքների իրականացման հաշվարկային մակերեսը կազմում է 13660,80 մ², որտեղ պահեստավորվելու են շինարարության համար անհրաժեշտ նյութերը, կայանվելու է շինտեխնիկան, ժամանակավոր շինությունները և այլն: Շինհրապարակում տեղադրվելու է մեքենաների անիվների լվանալու հարթակ:

Բետոնը և շաղախը մատակարարվելու են մոտակա բետոնաշաղախային հանգույցից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Նախագծի հողային աշխատանքներից առաջացող ընդհանուր հողային հանույթը կազմում է 4239 մ³ է, որից հետլիցքը կազմում է 520 մ³: Հետլիցքի համար նախատեսված հողային հանույթը կարճաժամկետ կապակի շինարարական հրապարակում և պարբերաբար կիրականացվի ջրցան՝ փոշեգոյացումը կանխելու նպատակով: Մնացած վտանգավոր նյութերով չաղտոտված 3719 մ³ հողային հանույթը կհեռացվի ու կտեղադրվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Շինարարական աղբը՝ 3683 մ³ ընդհանուր քանակով հավաքվելու է աղբահավաք տարողությունների մեջ և հեռացվելու է տարածքից մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով՝ տարածքում բացառելով աղբի կուտակումը և այրումը:

Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն ժամանակավոր կառույցների տեղադրմամբ՝ ապահովելով շին. հրապարակում սանիտարահիգիենիկ, կենցաղային և հանգստի պայմանները, աշխույժի աշխատասենյակ և այլն:

Ջուրն օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման, շինաշխատանքների կազմակերպման, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու համար: Շինարարության ժամանակ ջրի հիմնական աղբյուր կձառայի



համայնքային ջրամատակարարման ցանցը, որը շինարարության ողջ ընթացքում ապահովելու է անհրաժեշտ ջրապահանջը:

Կանաչապատումը իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ: Կանաչապատման համար անհրաժեշտ բուսահողի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի ՀՀ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:

Տարածքում առկա են ինժեներական բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքները՝ ջրամատակարարման, գազամատակարարման, էլեկտրամատակարարման գծերը և միացումներն իրականացվելու են արդեն իսկ գոյություն ունեցող համակարգերին:

Հաշվետվությունում ներկայացվել է նախատեսվող գործունեության աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային, ջրային ռեսուրսներ, մթնոլորտային օդ, կենսաբազմազանություն) և սոցիալական միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և մշակվել են միջոցառումներ՝ հնարավոր վնասակար ազդեցությունները կանխարգելելու, նվազեցնելու նպատակով: Նախատեսվել են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ:

Պատճառաբանական մաս. Համաձայն Հաշվետվության՝ կրթահամալիրը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է կառուցապատված տարածքում, շրջակա միջավայրի վրա ազդեցությունները շինարարության փուլում լինելու են կառավարելի և կրելու են կարճատև բնույթ:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության և կադաստրի կոմիտեները, Սյունիքի մարզպետարանը, Սիսիանի համայնքապետարանը: Հաշվետվությունը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Սիսիան համայնքի Սառնակունք բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում իրականացվել է երկու հանրային լսում, նախատեսվող գործունեությունը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում հետևել Հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, դրանց չբավարարման դեպքում նախատեսել հավելյալ միջոցառումներ:
2. Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների առավելագույն բեռնվածությունը:
3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղադրումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լիազոր մարմնի հետ համաձայնեցված:



4. Կանաչապատման և բարեկարգման աշխատանքներն իրականացնել՝ համաձայնեցված Սիսիանի համայնքապետարանի հետ՝ ապահովելով Հաշվետվությամբ ամրագրված բարեկարգման և կանաչապատման լուծումները:
5. Կրթահամալիրի տարածքում առկա ենթակառուցվածքների տեղափոխությունը իրականացնել իրավասու մարմինների հետ համաձայնեցված:

ԵՐԱՓՈՒԿՈՒՄ ԱՍՍ

«ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Սառնակունք բնակավայրի կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական պետական փորձաքննական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝



Աստղիկ Վարդանյան